րութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը և կը միաբանակցի (1876—78). բայց քիչ ժամանակէն կը մեկնի վանքէն և կը կարգուի վանահայր Կեսարիոյ Ս. Դանիէլ վանքին, ուր և կը վախճանի։

ՍՏԵՓԱՆՈՍ ԵՊՍ.— Մբ. 1802ին Պոլսի մէջ, ուր կը վախճանի 1827ին։

ՍՏԵՓԱՆՈՍ ԵՐԷՑ.— Մբ. Ս. Փրկչի վանքին մէջ, ուր Վասիլ պտրքի օրով ՊԴ (=1355) թուին կ'ընդօրինակէ Ճառընտիր մը, և ՊԺԲ (=1363) թուին Սարգիս ճառերը, Գրիգոր և Մկրտիչ պատրիարքներու օրով։ Այդ ձեռագիրները միացուած են և կը մնան վանքին մէջ (ՄՁ. Թ. 1110)։

ՍՏԵՓԱՆ ՁԷՅԹՈՒՆՑԻ.— Բրձ. ի նպաստ Ս. Յակոբի վանքին յիշատակ կը թողու մթերանոց մը Յոպպէի մէջ (Աւանգր. Տն. Ժողովի. Նիստ ՄՀ. 1888. էջ 162), կը վախճանի 1887ին։

ՍՏԵՓԱՆՈՍ ԿՐՕՆԱՒՈՐ. — Տիգրանակերտի Ս. Կարապետ եկեղեցիին մէջ կը գտնուի Աւետարան մը որ 1360ին ընդօրինակուած է Ս. Յակոբի վանքին մէջ, Ստեփանոս կրօնաւորի ձեռքով, յիշատակարանն է հետևեալը. «Գրեալ ի թվ. հայոց ՊԹ. (=1360) յԵրուսաղէմ. ընդ հով. տաճարիս աթոռակալ առաքելոցս Յակոբեանց, ի թագ. հայոց Կոստանդնի, և ի հայր. տեառն Մեսրոպայ. յառաջնորդութեան տէր Գրիգորայ եպիսկոպոսի Երուսաղէմի, ձեռամբ... գրչի Ստեփանոս կրաւնաւորի կամակցութեամբ և աւգնականութեամբ և խրատ տալով վերծանողի սպասաւորի բանի, սրբասնեալ Գրիգորի Խախանայի՝ փակակալի մեծ և հռչակաւոր սուրբ եկեղեցւոյս Յակոբայ և ամենայն աստուածընկալ նշանացս, և մանաւանդ կազմողի սորին» ....։ «Յիշեցէք ... զստացող սորին զԹագւորշահ դպիր և ... զծնողս Ստեփանոս Արեւեցի աշակերտ Սեր վարդապետի... համանման մեծի և առաջին վարդապետաց. և խոշորութեան գրիս և սխալանացս անմեղադիր լերուք և զթերին սիրով ուղղէք. քանզի յոյժ անհմուտ էի արուեստի գրչութեան, մանաւանդ ի չեշտ, ի ստոր, ի բոյթ. ի վանկ, ի փաղառութիւն, և ի Ժ. առոգանութեան...»։ (Թորոս Աղբար, Բ. էջ 437-8). հաւանաբար միևնոյն անձն է որ՝ 1355—1363, Ս. Փրկչի վանքին մէջ